



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ**

**«ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 21.11.2017թ. ԹԻՎ 455-Լ ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի պահանջներով, հաշվի առնելով Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանի 22.02.2018թ. թիվ Ե-203 գրավոր առաջարկը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. «Հանրային պաշտպանների մասնագիտացումը սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 21.11.2018թ. թիվ 455-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Մարզերում տեղաբաշխված հանրային պաշտպանների 2018թ. հաստիքները սահմանող աղյուսակում Արարատի մարզում հանրային պաշտպանների տեղաբաշխումը սահմանող 2-րդ կետը (տողը) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2.	Արարատ	Վեդի	1		3,5	5	Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի
		Մասիս	1	0,25			
		Արտաշատ	1	0,25			

1.2. Մարզերում տեղաբաշխված հանրային պաշտպանների 2018թ. հաստիքները սահմանող աղյուսակի «Ընդհանուր թիվը» տողում «Հ-ների քանակը» սյունակում «43» թիվը փոխարինել «44» թվով:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2018 թվականի մարտի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

27 փետրվարի 2018թ.
թիվ 67-Լ
ք. Երևան